ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«09» ապրիլի 2025թ.
N 20-01

**ՀՀ Վարչապետ**
**Նիկոլ Փաշինյանին**

Հարգելի պարոն Վարչապետ

Հունվարի 9-ի թիվ 02-01 և հունվարի 16-ի թիվ 06-01 գրություններով բարձրացրել ենք պետական մի շարք գերատեսչություններում աշխատողներին տեղափոխող ծառայողական ավտոբուսների շահագործումը շարունակելու անհրաժեշտության մասին հարցը:

Վերոնշյալ խնդիրը բարձրաձայնելով՝ նկատի չունենք միայն Վարչապետի աշխատակազմում, բայց նաև այլ գերատեսչություններում աշխատողներին տեղափոխող ծառայողական ավտոբուսների կրճատումը:

Քանի որ ունենք տեղեկություն, որ ավտոբուսները կրճատելու հրահանգը ստացվել է Վարչապետի աշխատակազմից, հետևաբար, խնդրի լուծումը պետք է ունենա համակարգային բնույթ:

Կարևոր է ընդունել, որ նման որոշման պատճառով պետական աշխատողները ստիպված են լինում զգալիորեն ավելի շատ ժամանակ և ֆինանսական միջոցներ, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեբանական ռեսուրսներ ծախսել աշխատանքի ժամանակին հասնելու և աշխատանքից տուն վերադառնալու համար, ինչն անխուսափելիորեն բերում է աշխատանքի արդյունավետության և պետական ծառայությունների որակի նվազմանը: Եթե ընդունված որոշման նպատակը որոշակի ֆինանսական ռեսուրսի խնայողություն է, ապա այն չպետք է հանգեցնի այլ ավելի գլոբալ ծախսերի (առողջություն, մարդկային կապիտալ, պետական համակարգի դիմադրողականություն):

Կրկին անգամ դիմում ենք Ձեզ՝ առաջարկելով թույլ տալ գերատեսչություններին պահպանել իրենց ծառայողական ավտոբուսները և լուծել աշխատողներին տեղափոխելու խնդիրը:

**Հարգանքով՝**
**Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի**
**աշխատողների ճյուղային արհմիության**
**նախագահ** հաստատված է էլ ստորագրությամբ **Ա. Ասատրյան**

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut